ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

### ԴԱՍԱԳԻՐՔ ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

91.99-5
Գ- 31

491.99-5
Գ-31

ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

**ԴԱՍԱԳԻՐՔ**
**ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ**

Հաստատված է Հայկական Խ Ս Հ Լուսժողկոմատի կողմից

ՅԵՐԿՐՈՐԴ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

14 MAR 2013

ՀՍՍՀ-ССР
А. Мясникян

5496
38

# I. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

## 1. Գեղագրության դասին



Աշակերտները գրում են։
Դասատուն ստուգում է։

Արտագրեցե՛ք։

Այստեղ յերկու նախադասություն կա։

Նախադասության վերջում դադար է լինում։
Գրելիս այդ դադարի տեղը դնում ենք վերջակետ։

Վերնագրի առաջին բառը սկսում ենք մեծատառով։
Նախադասության առաջին բառը սկսում ենք մեծատառով։

## 2. Մի անգամ ամռանը



Կարդացե՛ք հարցերը և ամեն մի հարցին պատասխանեցե՛ք մեկ նախադասությամբ։

1. Հոկտեմբերիկները գնացին ինչ հավաքելու։
2. Քանի՞ հոգի էյին նրանք։
3. Հոկտեմբերիկներն ինչ էյին վերցրել իրենց հետ։
4. Ինչպիսի՞ եղանակ էր։
5. Հոկտեմբերիկները հանկարծ ինչ լսեցին։
6. Ինչպիսի՞ անձրև եկավ։
7. Նրանք որտե՞ղ պահվեցին։
8. Ինչպե՞ս վերադարձան։



## 3. Երեխաները և շունը



1. Բնի առաջ, ձագերի մոտ պառկած էր շունը։



2. Շունը հեռացավ ձագերի մոտից։



3. Երեխաները ձագերից մեկին տարան



4. Շունը վերադարձավ և սկսեց դռան առաջ փռնկալ։



5. Երեխաները դուրս բերին ձագին։



6. Շունը ձագին տարավ իր բունը։

Կարդացե՛ք նկարների տակ տպված նախադասությունները և դուք կստանաք մի պատմվածք։

## 4. Լեվոնի պատմվածքները



Աննան



Իմ կատուն

Աննան հիվանդացավ:
Նա միշտ մուկ է բռնում:
Նա դեղ գրեց:

Յես ունեմ մի կատու:
Բժիշկը յեկավ:
Մեր կատուն մոխրագույն է:
Շուտով Աննան առողջացավ:

Այստեղ յերկու պատմվածք կա. մեկն Աննայի մասին է, իսկ մյուսը՝ կատվի մասին է:

Լեվոնը շփոթվել է և նախադասությունները խառը կարգով է արտագրել:

Դուք այս նախադասություններն այնպես արտագրեցե՛ք, որ յերկու կանոնավոր պատմվածքներ ստացվեն:

## 5. Համբիկը

1. Դպրոցում նրան այբբենարան տվեցին:
2. Մայրը Համբիկին դպրոց տարավ:
3. Այստեղ Համբիկը կարդալ սովորեց:

Նախադասությունները կարդացե՛ք այնպիսի կարգով, որ պատմվածք ստացվի:

## 6. Մեր նախաճաշը դպրոցում

Նախաճաշի ժամանակ է || Մենք ուտում ենք հաց ու պանիր || Մենք խմում ենք թեյ կամ կաթ || Նախաճաշից հետո խաղում ենք բակում ||

Արտագրեցե՛ք պատմվածքը և ամեն մի նախադասությունից հետո գծիկների տեղը վերջակետ դրեք:



## 7. Պաշտպանեցե՛ք թռչուններին

Թռչունները վոչնչացնում են վնասատու .... :
Մենք պետք է թռչունների համար բներ .... :

(միջատներին, շինենք)

Կարդացե՛ք նախադասությունները. կետերի տեղն ավելացրեք բաց թողած բառերը:

Բաց թողած բառերը տրված են փակագծերում:

| Նախադասությունը կազմվում է բառերից: |
|---|

## 8. Վո՞ր կենդանին ի՞նչ ձայն է հանում

Աքաղաղը կանչում է:
Ագռավները կռռում են:
Ճնճղուկը ....
Կովերը ....

(ճաչում է, ճաչում են. բառաչում է, բառաչում են. մայում է, մայում են)

Բառերն իրար հետ այնպես կապակցեցե՛ք, որ կանոնավոր նախադասություններ ստացվեն: Արտագրեցե՛ք:

## 9. Ո՛վ ինչ է անում

Կոշկակարը կոշիկ է կարում:
Դերձակները հագուստ են կարում:
. . . . քար են տաշում:
. . . . բժշկում է:
. . . . հաց են թխում:
. . . . ժամացույց է նորոգում:

(ժամագործ, ժամագործներ. հացթուխ, հացթուխներ. բըժիշկ, բժիշկներ. քարտաշ, քարտաշներ)

Բառերն իրար հետ այնպես կապակցեցե՛ք, որ կանոնավոր նախադասություններ ստացվեն:

Արտագրեցե՛ք:

## 10. Վո՛ր գործիքով ինչ են անում

Տախտակը սղոցում են սղոցով: Խոտը հավաքում են ....: Քարը կոտրում են ....:

(փոցխով, մուրճով)

Կարդացե՛ք նախադասությունները. կետերի տեղը ավելացրե՛ք բաց թողած բառերը:

Արտագրեցե՛ք:

## 11. Մեր ընթերցարանը

Մենք կանոնավոր հաճախում ենք .... (ո՞ւր): վեցօրյակում 2 ժամ կարդում ենք .... (որտե՞ղ): Հաճախ .... (որտեղի՞ց) գիրք ենք վերցնում տանը կարդալու:

Կարդացե՛ք և կետերի տեղը հարցին համար բառեր գրե՛ք:

Արտագրեցե՛ք:



# II. ԱՌԱՐԿԱ ՅԵՎ ՆՐԱ ԹԻՎԸ

## 12. Շնչավոր և անշունչ առարկաներ



| | | |
|---|---|---|
| պիոներ | ձի | արջ |
| կողով | տրակտոր | կաղամբ |
| նապաստակ | գորտ | աքաղաղ |

Արտագրեցե՛ք շնչավոր առարկաների անունները:

## 13. Առարկաներ

դասագիրք, մատնոց, տետ-
րակ, մատիտ, սղոց, թանաքաման.

Արտագրեցե՛ք միայն ուսումնական առարկաների անունները:

## 14. Ինչե՞ր են

Տանձը, խնձորը, դեղձը և ծիրանը պտուղներ են։
Վարդը, շուշանը և մանուշակը .... են։
Կաղնին, յեղևնին և բարդին .... են։
(ծառեր, ծաղիկներ)

Կարդացե՛ք և կետերի տեղը դրե՛ք այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե թված առարկաներն ի՛նչ են։

## 15. Զանազան առարկաներ

Դարբին, մուրճ, աղավնի, խոզ, հավ, հավաբուն, մեխ, այգի, այգեպան, հաց, հացթուխ, կոշիկ, կոշկակար

Արտագրեցե՛ք միայն անշունչ առարկաների անունները։

> Մարդիկ, կենդանիները, բույսերը, բոլոր տեսակի իրերը մի բառով կոչվում են առարկաներ։

## 16. Ո՛վ ինչով է պաշտպանվում

Ձին պաշտպանվում է սմբակներով, մեղուն՝ խայթոցով, շունը՝ ատամներով, կատուն՝ ճանկերով։

Արտագրեցե՛ք միայն շնչավոր առարկաների անունները։

## 17. Դպրոցում

Աշակերտը սովորում է .... (վորտե՞ղ)։
Աշակերտը կարդում է .... (ի՞նչ)։
Աշակերտը գրում է .... (ինչո՞վ)։
(դպրոցում, գիրք, գրչով)

Կարդացե՛ք և կետերի տեղը համապատասխան բառեր դրե՛ք։



## 18. Քաղցած գայլը



Կովն իր հորթուկի հետ արածում էր անտառի մոտ։ Կովը ծառերի յետևումն էր ու չէր յերևում։ Հեռվից յեկավ քաղցած .... (ո՞վ), ուզեց հարձակվել .... (ո՞ւմ) վրա։ Հանկարծ .... (ո՞վ) դուրս նետվեց .... (ինչերի՞) յետևից և յեղջյուրները դեմ արեց .... (ո՞ւմ)։ Գայլը վոր տեսավ կովի սուր .... (ինչե՞րը) փախավ, մտավ .... (ո՞ւր) և կորավ։

Կարդացե՛ք և կետերի տեղը հարցերին համապատասխան բառեր ավելացրե՛ք։

## 19. Գյուղի իրիկունը

Նախիրը նոր էր գյուղ վերադարձել։ Ամենքը խառնըվել էին իրար։ Կովը բառաչելով իր .... (ինչի՞ն) էր փնտրում, գոմեշն էր .... (ի՞նչին), վոչխարները կանչում էին իրենց .... (ինչերի՞ն), այծերն իրենց .... (ինչերի՞ն)։

Կարդացե՛ք և կետերի տեղը հարցերին համապատասխան բառեր դրե՛ք։

## 20. Միավանկ բառերի հոգնակին

**Եզակի** (մեկ) **Հոգնակի** (մեկից ավելի)





հավ — հավեր.

կով — . . . .

այծ — . . . .

Լրացրե՛ք այս միավանկ բառերի հոգնակին և գրեցե՛ք:

> *Առարկան ունի երկու թիվ*՝ եզակի և հոգնակի: Եզակին *ցույց է տալիս* մեկ *առարկա, իսկ* հոգնակին՝ մեկից ավելի *նույն տեսակի առարկաներ:*

## 21. Ձմեռ

*Ձմեռ է: Արեգակը երկնքում քիչ է երևում: Սարերը, դաշտերը և ձորերը ծածկված են ձյունով, իսկ գետերը՝ սառույցով: Ծառերը մերկ են:*

*Մեծերը և փոքրերը տաք շորեր են հագնում:*

Այս հոդվածից արտագրեցե՛ք միայն հոգնակի բառերը և հոգնակիի եր մասնիկի տակ գիծ քաշեցե՛ք:



## 22. Բազմավանկ բառերի հոգնակին

**Եզակի** **Հոգնակի**





պիոներ — պիոներներ

բանվոր — . . . .

Լրացրե՛ք այս բազմավանկ բառերի հոգնակին և գրեցե՛ք:

> *Հոգնակի կազմելիս միավանկ բառերին ավելացնում ենք* եր, *իսկ բազմավանկներին՝* ներ:

## 23. Ն-ով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին

**Եզակի** **Հոգնակի**





Լրացրե՛ք ն-ով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին և գրեցե՛ք:

## 24. Գազանանոցում

— Որտեղի՞ց ես գալիս, Արամ:

— Գազանանոցից: Ինչե՜ր ասես, որ չտեսա. ինչ գազաններ՝ առյուծներ, բորենիներ, աղվեսներ, ինչ թռչուններ՝ թութակներ, սոխակներ, ջայլամներ, դեղձանիկներ, ինչ սողուններ, տեսակ-տեսակ կապիկներ և ուրիշ շատ կենդանիներ:

*գազաններ, թռչուններ, սողուններ

Արտագրեցե՛ք հոգնակի բառերը և հոգնակիի ներ մասնիկի տակ գիծ քաշեցե՛ք:

## 25. Արագիլը

Արագիլն ուտում է ձկներ, գորտեր, միջատներ, որդեր, մկներ, մողեսներ և նույնիսկ թունավոր օձեր:

Արտագրեցե՛ք հոգնակի բառերը յեզակի դարձնելով:

## 26. Ստուգողական արտագրություն

Ձմեռը հարձակվեց գազան—ի վրա: Ձյունով ծածկեց դաշտ—ն ու անտառ—ը, իրար յետևից սառնամանիք— ուղարկեց: Բայց գազան—ը չվախեցան: Վոմանք տաք մուշտակ— եյին հագել, մյուս—ը մտել եյին իրենց խոր բն—ը:

Արտագրեցե՛ք հոդվածը՝ յեզակի բառերը հոգնակի դարձնելով (գծիկների տեղը ավելացրե՛ք հոգնակի մասնիկները):

## 27. Մեր հարևանի բակը

Մեր հարևանի բակում շատ հավ, բադ, սագ և անասուն կա:

Պառավը առավոտյան և յերեկոյան նրանց կուտ է տալիս: Յեվ ամեն կողմից նրա վրա յեն թափվում հավերը, ...., .... և ....:

Շարունակեցե՛ք պատմվածքը և կետերի տեղը գրե՛ք բաց թողած բառերը՝ համապատասխան ձևով:



# III. ԱՌԱՐԿԱՅԻ ՎՈՐՊԻՍՈՒԹՅՈՒՆԸ

## 28. Ընտանի կենդանիներ





խելոք ձի — մլավան կատու — բրդոտ վոչխար





հաչան շուն — ճարպիկ այծ — համառ էշ

Արտագրեցե՛ք միայն բուսակեր կենդանիների անունները վորպիսություն ցույց տվող բառերի հետ միասին:

## 29. Տիկնիկի նոր շորերը

Զարիկը նոր տիկնիկ ունի: Նրա հագին կա սպիտակ շապիկ, գույնզգույն գուլպաներ և դեղին կոշիկներ: Զարիկը տիկնիկի համար կարեց սիրուն զգեստներ և չթե գոգնոց:

Կարդացե՛ք միայն տիկնիկի նոր շորերի անունները, վորպիսություն ցույց տվող բառերի հետ միասին: Արտագրեցե՛ք:

## 30. Էն ի՞նչն է

*սպիտակ. փափուկ. սառը ....*
*անուշահոտ, կարմիր. փշոտ ....*
*սպիտակ, հեղուկ, թթու ....*

(վարդ, ձյուն, թան)

Վորպիսություն ցույց տվող այս բառերով գտե՛ք այն առարկաները, վորոնց վերաբերում են նրանք։

## 31. Վայրի կենդանիներ



*արջ* *աղվես* *նապաստակ*

(մրթմրթան, վախկոտ, խորամանկ)

Գրեցե՛ք վայրի կենդանիների անունները վորպիսություն ցույց տվող համապատասխան բառերի հետ միասին։

*Օրինակ՝* մրթմրթան արջ։

> *Այն բառերը, վորոնք պատասխանում են* վորպիսի՞ *կամ* ինչպիսի՞ *հարցերին, ցույց են տա-լիս առարկայի* վորպիսությունը *կամ* հատկությունը։



## 32. Ինչպիսի՞ առարկաներ են լինում

*սպիտակ* *շուշան* *ընդարձակ* ....
*կապույտ* .... *հարվածային* ....
*պարաշյուտային* .... *պիոներական* ....
(բանվոր, մանուշակ, դասարան, պալատ, աշտարակ)

Կարդացե՛ք և վորպիսություն ցույց տվող բառերից հետո համապատասխան առարկաների անուններ գրե՛ք։

Արտագրեցե՛ք։

## 33. Ինչպիսի՞ հատկություններ ունեն

*աշխատասեր մրջյուն* .... *աշակերտ*
.... *տոնածառ* .... *խինին*
.... *տրամվայ* .... *պղպեղ*
(դառն, կծու, փայլուն, կարմիր, գերազանցիկ, ճեղ, սրըն-թաց)

Առարկաների անուններից առաջ վորպիսություն ցույց տվող համապատասխան բառեր ավելացրե՛ք։

## 34. Գարունը յեկավ

*Սիրուն գարունը յեկավ։* .... (ինչպիսի՞) *արևը փայլում է։* .... (ինչպիսի՞) *խոտը յերևաց։* .... (ինչպիսի՞) *ծաղիկներ ծաղկեցին։* .... (ինչպիսի՞) *թռչունները թռչում են։*

(ծլվլան, հոտավետ, կանաչ, պայծառ)

Կարդացե՛ք և կետերի տեղը հարցերին համապատասխան վորպիսություն կամ հատկություն ցույց տվող բառեր գրե՛ք։

# IV. ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

## 35. Ո՛վ ի՞նչ է անում



*Հայրիկը* կարդում է *թերթ։ Մայրիկը լսափողով* լսում է *ռադիո-հաղորդում։ Սուրիկն* արտագրում է։

Արտագրեցե՛ք։ Գիծ քաշեցե՛ք այն բառի տակ, վորոնք ցույց են տալիս, թե ի՛նչ է անում կամ ի՛նչ է լինում առարկան։

> *Այն բառերը, վորոնք պատասխանում* ի՞նչ է անում *կամ* ի՞նչ է լինում *հարցերին, ցույց են տալիս առարկայի* գործողությունը։



## 36. Անտառում

*Ագռավը կռավում է։ Ոձը ֆշշում է։ Բզեզը բզզում է։ Փայտփորը թխկթխկացնում է։*

Արտագրեցե՛ք և առարկայի գործողությունը ցույց տվող բառերի տակ գիծ քաշեցե՛ք։

## 37. Վոր առարկան ի՞նչ է անում կամ ի՞նչ է լինում

*Կոլտնտեսականը վարում է, ցանում է, հնձում է։*
*. . . . կարդում է, գրում է, հաշվում է։*
*. . . . ծլում է, կանաչում է, ծաղկում է։*

Գործողությունից իմացե՛ք առարկան և կարդալիս կետերի տեղը առարկայի անունը գրե՛ք։

## 38. Ի՞նչ ենք անում

| | |
|---|---|
| *Յես գրում եմ։* | *Մենք կարդում ենք։* |
| *Դու նկարում ես։* | *Դուք յերգում եք։* |
| *Նա կարում է։* | *Նրանք խաղում են։* |

Արտագրեցե՛ք և գործողություն ցույց տվող բառերի տակ գի՛ծ քաշեցե՛ք։

## 39. Միշտ գերազանց սովորենք

*Այսքան ուրախ կյանքը մեզ*
*Մեծ Ստալինն է տվել*
*Յեվ հայրական խնամքով*
*Մեզ փայփայել ամեն օր։*

*Դրա համար յեկեք մենք*
*Միշտ գերազանց սովորենք։*
*Լինենք խելոք, կարգապահ*
*Յեվ չունենանք բացակա։*

> *Վոտանավորի յուրաքանչյուր տողի առաջին բառն սկսում ենք* մեծատառով։

Արտագրեցե՛ք գործողություն ցույց տվող բառերը։

## V. ՄԵԾԱՏԱՌԸ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՄ

### 40. Մարդկանց անուններ

Արմենիկ, Արշակ, Նունիկ, Խորեն, Մինաս, Խաչիկ, Անուշ, Սուրեն, Խաչատուրն ու Աշխենն ո՞ւր են։

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք մարդկանց անունները (տակը գի՛ծ քաշեցե՛ք)։

### 41. Նման անուններ

1. Այգում Համիկի մայրը պոկում էր համիկ։
2. Մեր Աղավնին սիրում է աղավնի։

Արտագրեցե՛ք։

### 42. Մեր հայոց լեզվի դասատուն

Ես սովորում եմ յերկրորդ դասարանում։ Մեր հայոց լեզվի դասատուն ընկ...... է։

Արտագրեցե՛ք և կետերի տեղն ավելացրե՛ք ձեր հայոց լեզվի դասատվի անունն, ազգանունը։

### 43. Ի՞նչ տեսա

Յերևան քաղաքը շատ գործարաններով տեսա, Արմավիր գյուղը բամբակով առատ տեսա, Զանգու գետն էլեկտրակայաններով տեսա, Արագած սարը տուֆով հարուստ տեսա։

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք քաղաքի, գյուղի, գետի, սարի անունները։

> Գրելիս քաղաքների, գյուղերի, գետերի և սարերի անունները նույնպես սկսում ենք մեծատառով։



### 44. Մանես

Մանեսը Ալավերդու շրջանի կենտրոնն է։ Մանեսի մոտով հոսում է Դեբեդ գետը. Մանեսից 4 կիլոմետր հեռավորության վրա գտնվում է Սանահին կայարանը։

Արտագրեցե՛ք միայն գյուղի, շրջանի և կայարանի անունները։

### 45. Մեր ամենամեծ քաղաքները

Մեր ամենամեծ քաղաքներն են՝ Մոսկվան, Լենինգրադը, Բաքուն, Կիևը, Թբիլիսին, Ստալինգրադը, Կիրովը և այլն։

Արտագրեցե՛ք միայն քաղաքների անունները։

### 46. Բառախաղեր

1. Դու էլ խոսի՛ր, ա՛յ Խորեն,
   Քո մտքերն էլ շատ խոր են։
2. Թե այգիներ յերևան,
   Դու կհասնես Յերևան։

Արտագրեցե՛ք միայն մարդկանց և քաղաքների անունները։

### 47. Յերևանի փողոցները

Յերևանում կան բազմաթիվ փողոցներ։ Ահա նրանցից մի քանիսի անունները՝ Կարմիր Բանակի փողոց, Աբովյան փողոց, Խորհուրդների փողոց։

Արտագրեցե՛ք և փողոցների անուններն ընդգծեցե՛ք։

> Գրելիս փողոցների անունները նույնպես սկսում ենք մեծատառով։

## 48. Մեր սիրելի բանաստեղծները

Ալեքսանդր Սերգեյեվիչ Պուշկինը և Հովհաննես Թումանյանը մեր սիրելի բանաստեղծներն են։
Պուշկինը ծնվել է Մոսկվայում։
Թումանյանը ծնվել է Դսեղ գյուղում, որի մոտով հոսում է Դեբեդ գետը։

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք մարդկանց անուն, հայրանուն ու ազգանունները, քաղաքի, գյուղի և գետի անունները։

> Գրելիս մարդկանց հայրանունները նույնպես սկսում ենք մեծատառով։

## 49. Սովորենք հասցե գրել

> Յերևան
> Մարքսի փողոց № 14
> Գրիգոր Մարգարյանին

Արտագրեցե՛ք այս հասցեն։



# VI. ՎԱՆԿ ՅԵՎ ԲԱՌԵՐԻ ՏՈՂԱԴԱՐՁ

## 50. Մաքուր օդում,

Խաղ ա-նե-լով մա-քուր օ-դում
Ուժ, յե-ռանդ ենք հա-վա-քում,
Խոր-հուրդ-նե-րի յերկ-րի հա-մար
Աշ-խա-տան-քի պատ-րաստ-վում։

Խաղեր կազմակերպելիս վիճակ են գցում՝ բառերը վանկ-վանկ արտասանելով։

Վանկերի բաժանած կարդացե՛ք այս ոտանավորը։
Արտագրեցե՛ք ոտանավորը՝ բառերը վանկերի բաժանած։

## 51. Թռչուններ

| | | |
|---|---|---|
| — քավ | ծի—նակ | բա— |
| — փոր | ա—ղաղ | ագ— |

(փայտփոր, կաքավ, ագռավ, աքաղաղ, ծիծեռնակ, բազե)

Լրացրե՛ք բառերի մեջ բաց թողած վանկերը և գրեցե՛ք վանկերի բաժանելով։
Օրինակ՝ կա-քավ։



## 52. Շարադ

Առաջին վանկը վառելիք է։
Յերկրորդ վանկը մարմնի մաս է։
Ամբողջ բառն անտառի թռչուն է։

Գտե՛ք այս շարադի լուծումը։

## 53. Վանկախաղ

Նու —
Առ — նիկ
Մա —

Կա — րո
Կա — րեն
Կա — մո

Այս վանկերից բառեր կազմեցե՛ք և գրեցե՛ք: Գրելիս բառերը գծիկներով վանկերի չբաժանե՛ք:

## 54. Աշուն

Դաշ-տը մեր-կա-նում, ո-րը կար-ճա-նում,
քա-մին է խա-ղում, անձ-րե-վը մա-ղում։

Առանց վանկերի բաժանելու արտագրեցե՛ք վոտանավորի ձևով:

> Վանկերի թվին նայելով բառերը լինում են՝ միավանկ (*սար*), յերկավանկ (*սե-ղան*), յեռավանկ (*լու-սա-մուտ*) և այլն։
>
> Մեկից ավելի վանկ ունեցող բառերը կոչվում են բազմավանկ։

## 55. Առածներ

*Ով կաշխատի՝ նա կուտի։*
*Մի ձեռք ծափ չի տա։*
*Այսորվա գործը վաղվան մի՛ թողնիր։*

Արտագրեցե՛ք. բազմավանկ բառերը գծիկներով վանկերի բաժանեցե՛ք:

## 56. Միավանկ և բազմավանկ անուններ

*Արաքսի, Նինել, Հեղինե, Վիլեն, Սոս, Լեվոն, Սուրեն, Կիմ, Գեղամ, Արսեն, Ջաֆար*

Նախ՝ արտագրեցե՛ք միավանկ, ապա՝ յերկավանկ և յեռավանկ անունները:



## 57. Բառախաղեր

1. *Ամեն տարի* գարնանը՝
*Մեր տուն պիտի* գար նանը։
2. *Ներս արի,* ա՛ թոռ։
*Ու բեր ինձ* աթոռ:

Արտագրեցե՛ք. բառերը գծիկներով վանկերի բաժանեցե՛ք։

## 58. Դպրոցական ներքին կանոններից

1. Ամեն մի աշակերտ պարտավոր է լավ իմանալ և առանց թերանալու կատարել դպրոցական ներքին կանոնները։

2. Ուսման մեջ լինել գերազանց։

3. Հարգել ուսուցիչներին, մեծերին, ընկերներին և քաղաքավարի վերաբերվել նրանց հետ։

Արտագրեցե՛ք կարճ տողերով, վորպեսզի տողադարձ անելը ճիշտ-ճիշտ պատահի: Օրինակ՝ ամեն մի աշա-
կերտ պարտա-

> Տողադարձ *անելու համար պետք է բազմավանկ բառերը կանոնավոր կերպով* վանկ-վանկ արտասանել *և ամբողջական վանկը կամ վերի տողում գրել կամ հաջորդ տողի սկիզբը տանել։*
>
> Միավանկ *բառերը տողադարձ անել չի կարելի։*

## 59. Կատակասեր Վարդանը

*Վարդանը և Վահանը հանդում կովեր էին պահում։*

*— Վահա՛ն, Վահա՛ն, — ասաց Վարդանը, —* կամ դո՛ւ վազիր՝ կովերը յե՛տ տուր, յես հաց ուտեմ, կամ յես հաց ուտեմ, դո՛ւ վազիր՝ կովերը յե՛տ տուր:

Արտագրեցե՛ք կարճ տողերով միայն ուղղագիր տառերով տպված մասը։

# VII. ՀՆՉՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՏԱՌԵՐ

## 60. Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ

Վանկն ունենում է մեկ կամ մեկից ավելի հնչյուններ։

Հնչյունները լինում են ձայնավոր և բաղաձայն։

Ձայնավոր հնչյուններն են՝ ա, ե, ը, ի, ո, ու։

Բաղաձայն հնչյուններն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ:

Հայոց լեզվի հնչյուններից 6-ը ձայնավոր են, իսկ 30-ը՝ բաղաձայն:

## 61. Բաց թողած ձայնավորներ

պիոն—ր    գործ—րան    դ—դձ
տ—նձ    նարգ—զ    աշակ—րտ

Գտե՛ք ինչ ձայնավորներ են բաց թողած այս բառերում:

## 62. Կրկնակ բաղաձայններով բառեր

Եմման տարրական դպրոցի երրորդ դասարանումն է։ Չնայած նա մի քիչ չարաճճի է, բայց շատ լավ սովորում է և օգնում դասերի մեջ իր ընկերուհիներ Աննային և Հովհաննեսին։

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք կրկնակ բաղաձայնները:

## 63. Արագիլ

Ա-րա-գիլ, բա-րո՛վ ե-կար,
Հեյ, ա-րա-գիլ, բա-րո՛վ յե-կար.
Բույ-նըդ շի-նիր դու մեր ծա-ռին,
Մեզ մոտ մը-նա ամ-բողջ տա-րին։

Արտագրեցե՛ք՝ վանկերի բաժանած:

Ամեն մի վանկում ընդգծեցե՛ք ձայնավորները։



Առանց ձայնավորի վանկ չկա: Ձայնավորը մենակ կարող է վանկ կազմել։ Բառի մեջ վորքան ձայնավոր լինի, այնքան էլ վանկ կլինի։

Օրինակ՝ արագիլ բառը յեռավանկ է, վորովհետև նրա մեջ յերեք ձայնավոր կա։

## 64. Գաղտնավանկով բառեր

բժիշկ, դպրոց, գրադարան, մկրատ, նկար

Կազմեցե՛ք նախադասություններ այս բառերով և գրեցե՛ք:

Բառամիջում լսվող ը ձայնավորը չի գրվում։ Օրինակ՝ արտասանում ենք բըժիշկ, դըպրոց, բայց գրում ենք բժիշկ, դպրոց։

Դըպ-րոց բառի առաջին վանկը գաղտնավանկ է։

## 65. Գաղտնավանկով բառի բաժանումը վանկերի

բը-ժիշկ, դըպ-րոց, գը-րա-դա-րան, մըկ-րատ, նը-կար, բար-ձըր, գը-լուխ, կը-տավ, թըռ-չուն, մա-նըր, քաղ-ցըր, ար-կըղ, Մը-կըր-տիչ, խոր-հըր-դա-յին

Արտագրեցե՛ք՝ վանկերի բաժանած:

Բառամիջում լսվող ը ձայնավորը վանկերի բաժանման ժամանակ գրվում է։

## 66. Թիթեռ

Պու-տիկ, սու-տիկ    Շո-ղե-րի տակ
Պուտ-պու-տիկ,    Վառ-վը-ռուն,
Շը-ղարշ թե-վեր    Վար-տեղ ծա-ղիկ՝
Խա-տու-տիկ,    Դու տի-տիկ։

Արտագրեցե՛ք բառերը գծիկներով վանկերի բաժանած։

## 67. Մեր բնակարանը

Մեր բը-նա-կա-րա-նը գըտ-նը-վում է Յե-րե-վա-նում՝ Լե-նի-նի փո-ղո-ցի վը-րա։
Մեր բը-նա-կա-րա-նըն ու-նի յե-րեք սե-նյակ՝ մեկ ըն-դու-նա-րան, մեկ սե-ղա-նա-տուն, մեկ էլ նըն-ջա-րան։

Կարդացե՛ք վանկերի բաժանած։

## 68. Հանելուկ

Աչքեր ունի՝ վոտքեր չունի,
Գլուխ ունի՝ ձեռքեր չունի.
Ձու յե ածում՝ փետուր չունի.
Շորեր ունի՝ առանց կարի։

Հանելուկի լուծումը՝ ոձ։

Գրեցե՛ք հանելուկի լուծումը վորպես վերնագիր և ապա՝ արտագրեցե՛ք հանելուկը վանկերի բաժանելով։

## 69. Բառեր տողադարձի համար

հոկտեմբերիկ, կոմունիստ, տպարան, Մկրտիչ, գրադարան, դպրոցներ, Թվաբանություն, Նկարչություն, Ֆլորա, խորհրդային

Բառերը գծիկներով վանկերի բաժանեցե՛ք. նույն բառերը տողադարձի համար յերկուական մասի բաժանեցե՛ք։

*Օրինակ՝*
տը-պա-րան, տը-պարան, տպա-րան,
Մը-կըր-տիչ, Մը-կրտիչ, Մկըր-տիչ,
խոր-հըր-դա-յին, խոր-հըրդային, խորհըր-դային, խորհրդա-յին։



Տողադարձի ժամանակ բառամիջի ը ձայնավորը գրվում է միայն առաջին տողի վերջին վանկում և յերկրորդ տողի առաջին վանկում։

## 70. Յես գարունն եմ

Յես բերում եմ պայծառ արեվ ու տաք օրեր։ Յես ծածկում եմ դաշտերը դալար խոտերով։ Յես սփռում եմ ամեն տեղ ծաղիկներ ու թիթեռներ։

Արտագրեցե՛ք կարճ տողերով, վոր տողադարձ անելը շուտ-շուտ պատահի։

## 71. Տառախաղ



Ստորակետի տեղ մի թիվ գրեցեք,
միջակետի տեղն էլ՝ մի տառ։
Կստացվի շատ քաղցր պտղի անուն։
Վո՞րն է այդ պտուղը։

Տառախաղի լուծումը՝ թութ։

Հնչյունի նշանը կոչվում է տառ։
Հնչյունը արտասանվում է և լսվում։
Տառը գրվում կամ տպվում է և կարդացվում։

## 72. Ձյունը

Մեծ փաթիլներով,
Սիրուն ու նախշուն՝
Մաղում է ձյունը
Սարում ու դաշտում։

Արտագրեցե՛ք և ամեն մի բառի վերևը գրեցե՛ք տառերի թիվը։

## 73. Այբուբեն

Աա Բբ Գգ Դդ Եե Զզ

Ըը Թթ Ժժ Իի Լլ Խխ

Ծծ Կկ Հհ Ձձ Ղղ Ճճ

Մմ Յյ Նն Շշ Ոո Ուու

Չչ Պպ Ջջ Ռռ Սս Վվ

Տտ Րր Ցց Փփ Քք Ֆֆ

Տառերի սովորական շարքը կոչվում է այբուբեն:

Հայոց լեզվի այբուբենն ունի 36 տառ: Ամեն տառ ունի յերկու ձեվ՝ մեծատառ և փոքրատառ:

1) Այբուբենից արտագրեցե՛ք միայն մեծատառերը:
2) Այբուբենից արտագրեցե՛ք միայն փոքրատառերը:

## 74. Հանելուկ

Գտեք տղայի մի այնպիսի անուն, վոր հինգ տառից լինի և վորի առաջին յերեք տառը դասավորված լինի այբբենական կարգով:

Հանելուկի լուծումը՝ Աբգար:

Արտագրեցե՛ք:



## 75. Վարժություններ

ժ թ զ դ գ բ

1) Այս բաղաձայնները դասավորեցե՛ք այբբենական կարգով:
2) Այժմ այբբենական կարգով դասավորեցե՛ք ձայնավորները:

ու ո ի ը ե ա

## 76. Միջազգային բառեր

տրակտոր, ռադիո, տրամվայ, ավտոմոբիլ, միլիցիոներ, շոֆեր, աերոպլան, կինո, պատեֆոն, կոմբայն

Արտագրեցե՛ք այբբենական կարգով:

## 77. Յեվգինեն և Յեվդոկիան

Յեվգինեն և Յեվդոկիան գեղեցիկ և անսխալ են գրում: Նրանք շատ լավ կարդում են և պատմում:

Արտագրեցե՛ք: Ընդգծեցե՛ք սղագրության նշանը:

Առանձին գործածելիս յեվ-ը կարճ գրվում է և, վորը կոչվում է սղագրության նշան:
Սղագրության նշանը մեծատառ չունի և գրվում է յերեք տառով (Յեվ). որինակ՝ Յեվգինե:

## 78. Գարնանացան

Գարնան մատաղ,
Վառ արեվից
Մռայլ և ցուրտ
Որերն անցան

Յեվ սկսվեց
Հանդ ու դաշտում
Բոլշեվիկյան
Գարնանացան:

Արտագրեցե՛ք

391 Հայոց լեզու II դաս—2

# VIII. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1) ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐՈՒՄ ԳՐՈՒՄ ԵՆՔ դ, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ թ։

### 79. Միամիտ Վարդուհին

Փոքրիկ Վարդուհու մայրը ծանր հիվանդ եր։ Բժիշկը հիվանդին դառը դեղ եր տվել խմելու։ Մայրը զզվելով եր խմում դեղը։ Վարդուհին այդ վոր տեսավ, ասաց. «Մայրիկ, թող քո՛ փոխարեն յես խմեմ դեղը»։

*Վարդուհի, վարդ, Վարդան, Վարդանուշ

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք Վարդուհի բառի դ տառը։

> Շատ բառերում տառերն ինչպես վոր գրում ենք, այնպես չենք արտասանում։
> Օրինակ՝ Վարդուհի բառի մեջ գրում ենք դ, բայց արտասանում՝ թ։

### 80. Նմանահնչյուն բառեր

Մեր հորթը մնաց հորդ անձրևի տակ։
Վորդերը փչացրին խաղողի վորթը։

* հորդ, վորդ

Արտագրեցե՛ք այն բառերը, վորոնց մեջ շեղագիր տառերը չեն համապատասխանում իրենց հնչյուններին։

### 81. Դաշտի վարդը

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Մի վարդ տեսավ դաշտի միջին.
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին։

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք դ տառը, վորը իր հնչյունի նման չի արտասանվում։



### 82. Ուղղագրական բառացուցակ

դ — թ

| | | |
|---|---|---|
| անդամ | ժողովուրդ | որդ |
| արդեն | խնդրել | վրդովել |
| Թադևոս | խորհուրդ | ջարդան |
| կարդալ | մարդ | վորդ |
| դդում | կենդանի | |
| վարդ | յերկրորդ | |
| ընդարձակ | հորդ | |

Արտագրեցե՛ք այս ուղղագրական բառացուցակը։

### 83. Ստուգողական արտագրություն

1) Սավառնակը հպարտ սուրում ե օ — ում։
2) Մոծակը թռավ, բոլոր կեն — անիների արյան համը առավ և տեսավ, վոր ամենից քաղցրը մար — ու արյունն ե

*մարդ, կենդանի, օդ, օդանավ

Արտագրեցե՛ք և գծիկների տեղը դրե՛ք բաց թողած տառերը։

### 84. Կարդա՛

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, գրի՛ր տարին բոլոր.
Կարդացողի խելքն ե կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսավոր։

*կարդա՛, կարդացող

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք դ տառը, վոր արտասանվում ե թ։

**2) ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐՈՒՄ ԳՐՈՒՄ ԵՆՔ գ, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ՝ Ք։**

## 85. Կոլտնտեսության դաշտում

Ամռան շոգերին
Ոսկեզօծ դաշտում
Մեծ կոմբայններով
Ցորեն են հնձում։

* շոգ

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք այն բառերը, որոնց մեջ գ տառը արտասանվում է ք։

## 86. Դաշտի ստախանովականները

Դաշտ են դուրս յեկել զվարթ յերգերով
Դաշտի հերոսները մեր ուրախ յերկրի։

* յերգ

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք գ տառը, որ չի համապատասխանում իր հնչյունին։

## 87. Փոքրիկ Գրիգորը

Թագուհին և Մարգարիտը հագան իրենց նոր հագուստները, կապեցին գոգնոցներն ու գնացին դպրոց աշակերտական հանդեսին յերգելու և արտասանելու։

— Յես էլ նրանց պես կարող եմ կարդալ, գրել, յերգել ու արտասանել, — ասում է փոքրիկ Գրիգորը։

* Թագուհի, Գրիգոր, յերգ, յերգել, գոգնոց

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք այն բառերը, որոնց գրությունը չի համապատասխանում արտասանությանը։



## 88. Վարժություններ

1) Ուրագ բառը յեզակի թիվ է, իսկ մարագներ՝ հոգնակի։
2) Ամռանը արեվը շուտ է ծագում։

*ուրագ, մարագ, հոգնակի, ծագում

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք գ տառը, որ արտասանվում է ք։

## 89. Ուղղագրական բառացուցակ

գ — ք

| | | |
|---|---|---|
| կարգ | Մարգարիտ | շոգ |
| յերգ | Սարգիս | պարգևատրել |
| | հոգնել | հոգնակի |
| | ոգնել | ոգնական |
| կարագ | զուգվել | Ուրագ |
| մարագ | ծագել | Գրիգոր |

Արտագրեցե՛ք այս ուղղագրական բառացուցակը։

## 90. Ստուգողական արտագրություն

1) Ա՛յ տղա, անունդ Սա—, քեզ կուտեցնեմ մեղր ու կարա—։

2) Կար—ապահ Սար—իսը յերկու ան—ամ պար—ևատրվեց։

3) ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐՈՒՄ ԳՐՈՒՄ ԵՆՔ բ, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ՝ փ։

## 91. Առողջապահական կանոն

*Աչքն իբրև նուրբ օրգան, պետք է լավ խնամվի։ Երբեք չկարդալ պառկած վիճակում կամ աղոտ լույսի տակ։*

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք բ տառը, որ արտասանվում է փ։

## 92. Կազմել նախադասություններ

Սերոբ, Հակոբ, Գաբրիել, սրբել, յերբեք

Գրեցե՛ք նախադասություններ այս բառերով։

## 93. Ուղղագրական բառացուցակ

| | բ—փ | |
|---|---|---|
| Գաբրիել | յերբ | յերբեք |
| դարբին | նուրբ | համբերել |
| իբրև | Հակոբ | համբուրել |
| սրբել | Սերոբ | Քերոբ |

## 94. Ստուգողական արտագրություն

1) Հակո—ը և Սերո—ը յեկան Քերո—ի մոտ, յեր—նա գնացել եր Պատանի հանդիսատեսի թատրոնը։
2) Դար—ին Գա—րիելը դար—նոցում պայտեր է շինում։



4) ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐՈՒՄ ԳՐՈՒՄ ԵՆՔ ջ, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ՝ չ։

## 95. Կազմել նախադասություններ

արջ, մրջյուն, վերջ, վերջակետ, ամբողջ, հաջող, առողջ, աղջիկ, վերջին, առաջին

Գրեցե՛ք նախադասություններ այս բառերով։

## 96. Ուղղագրական բառացուցակ

ջ—չ

| Րջ | | | Ղջ |
|---|---|---|---|
|  | թրջել | աղջիկ |  |
| | մրջյուն | ամբողջ | |
| | յերջանիկ | առողջ | |
| | վերջ | վողջույն | |
| արջ | առաջարկ | միջակետ | չղջիկ |
| | առաջին | միջոց | |

Արտագրեցե՛ք այս ուղղագրական բառացուցակը։

## 97. Ստուգողական արտագրություն

1) Մենք ապրում ենք յեր—անիկ կյանքով։ 2) Մեր առա—ին դասը հայերեն է, իսկ վեր—ինը՝ թվաբանություն։ 3) Գրիգորի աղ—իկն ամբող— օրը կարդում է։ 4) Արամի քրո— գնահատականները լավ և մի—ակ են։ 5) Գրքի մե— վոչինչ չպետք է պահել։ 6) Մեծ դասամի—ոցին նախաճաշում ենք։

5) ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐՈՒՄ ԳՐՈՒՄ ԵՆՔ ձ, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ՝ ց։

## 98. Ես ինչն եմ

Ես եմ մի վերմակ սպիտակ ընդարձակ, և տաքացնում եմ, և մրսեցնում, դերձակներին չեմ հարստացնում։

Հանելուկի լուծումը՝ ձյան սավան:

*ընդարձակ, դերձակ, դերձակություն

Արտագրեցե՛ք: Ընդգծեցե՛ք ձ տառը, որ արտասանվում է ց:

## 99. Ուղղագրական բառացուցակ

ձ - ց



| | |
|---|---|
| արձագանք | դերձակ |
| արձակ | ընդարձակ |
| արձակուրդ | համարձակ |
| բարձել | հանդերձարան |
| դարձյալ | փորձ |

դերձակ

Արտագրեցե՛ք այս ուղղագրական բառացուցակը:

## 100. Ստուգողական արտագրություն

1) Դեր—ակ Համբար—ումը դար—յալ բար—րաձայն կար—աց «Համար—ակ ո—աչու» հո—վածը։
2) Ըն—ար—ակ անտառում ձայնն ար—ագանք է տալիս։
3) Ձմեռային ար—ակուր—ին դպրոցի հանդեր—արանը նորո—եցին։



6) ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐՈՒՄ ԳՐՈՒՄ ԵՆՔ ղ, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ՝ խ։

## 101. Խորհրդային Միության յերեխաներին գրված նամակից

Մեր շնորհակալության խոսքի հետ, ձեզ նվեր ենք ուղարկում մեր պարտեզների նարինջներից։

Ընդունեցեք ջերմ վողջույններ ամբողջ Իսպանիայի ձեր յեղբայրներից։

Արտագրեցե՛ք: Ընդգծեցե՛ք ղ տառը, որը կարդացվում է խ:

## 102. Ուղղագրական բառացուցակ



| | | |
|---|---|---|
| աղբ | | թուղթ |
| աղբյուր | | հաղթել |
| յեղբայր | | Ղղթա |
| աղջիկ | | դեղձ |
| ամբողջ | ուղտ | դեղձանիկ |
| վողջույն | կեղտ | խաղցած |

Արտագրեցե՛ք այս բառերը այբբենական կարգով:

## 103. Ստուգողական արտագրություն

1) Հակոբը սիրում է դե—ձ։ 2) Տերտերակիդ շապկին թու—թ քաշիր, վոր չկե—տոտվի։ 3) Ու—տը քայլում է, իսկ դե—ձանիկն ու չ—ջիկը թռչում են։ 4) Թադեվոսի յե—բայրն ա—բյուրից ջուր բերեց։

### 7) ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐՈՒՄ ե ՏԱՌԸ ր ՏԱՌԻՑ ՀԵՏՈ ՉԻ ԱՐՏԱՍԱՆՎՈՒՄ։

## 104. Վարժություններ

1) Շնորհակալություն մեր հերոս օդաչուներին, վորոնք արհամարհեցին վախը և փրկեցին չելյուսկինյաններին։ 2) Խորհուրդները մեզ տվեցին նոր կյանք։ 3) Կեցցեն ամբողջ աշխարհի պիոներները։

* շնորհակալություն, խորհուրդ, աշխարհ

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք այն բառերը, վորոնց մեջ ե տառը չի **արտասանվում**։

## 105. Ուղղագրական բառացուցակ

| | | |
|---|---|---|
| աշխարհ | խոնարհ | խորհուրդ |
| ճանապարհ | արհամարհել | շնորհակալություն |

## 106. Գիշեր

Խաղաղ գիշեր է,
Գեղեցիկ ու զով,
Աշխարհը նիրհում է
Անուշ յերազով։
* աշխարհ

Արտագրեցե՛ք։ Ընդգծեցե՛ք ե տառը ր բաղաձայնից հետո։

## 107. Ճանճը

Խոնարհ ու հեզ մի հոգնած յեզ արորն ուսին, ճանճը ուսին, մի իրիկուն գալիս եր տուն։

* խոնարհ

Արտագրեցե՛ք այն բառը, վորի մեջ ե տառը չի **արտասանվում**։

## 108. Ստուգողական արտագրություն

Համաշխար—ային թռիչքի մրցանակները պատկանում են խոր—րդային պարաշյուտիստներին։



### 8) Ը ՁԱՅՆԱՎՈՐԸ ԲԱՌԱՍԿԶԲՈՒՄ ՅԵՎ ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ

## 109. Ընկույզը

Ընկուզենին ընդարձակ տարածել եր իր ճյուղերը։ Ընկերս պառկել եր նրա տակը։

— Զարմանալի բան է,—ասում եր նա,—այս ահագին ծառը տես, իր պտուղը տես։ Սրա պտուղը ձմերուկից էլ մեծ պետք է լիներ։

Հենց այդ ժամանակ մի ընկույզ պոկվեց, ընկավ քըթին՝ արնացրեց։

— Վա՜յ,—վեր թռավ ընկերս,—ինչ լավ եր՝ ձմերուկ չեր, թե չե՝ գլուխս կջարդվեր։

Արտագրեցե՛ք։
Ընդգծեցե՛ք ը ձայնավորով սկսվող բառերը։
Ընդգծեցե՛ք ը ձայնավորով վերջացող բառերը։

## 110. Սպարտակի կոլեկտիվը

Ժամի չորսին սկսվելու յեր պիոներական ջոկատի շարքային պարապմունքը։ Պիոներները վերադարձել եյին դպրոցից և անհամբեր սպասում եյին ջոկատավար Սպարտակին։ Նա շտապ յեկավ, պիոներներին զգաստ կանգնեցրին շարքի։

*Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք* շեղագրով *տպվածը։*

*Վերջում առանձին արտագրեցե՛ք ընդգծված բառերը՝ վանկերի* բաժանելով. *օրինակ՝* ըս—կը—սել, ըշ—տապ։

Ը ձայնավորը բառասկզբում սովորաբար գրվում է։

Զբ, զգ, սթ, սկ, սպ, ստ, սք, շտ յերկբաղաձայններով սկսվող բառերի սկզբում ը լսվում է, բայց չի գրվում. օրինակ՝

| | | |
|---|---|---|
| զբ | սկ | ստ |
| զբաղմունք | սկյուռ | Ստեփան |
| զբոսանք | սկսել | ստվեր |
| զգ | սպ | շտ |
| զգալ | սպասել | շտապ |
| զգայարան | սպիտակ | շտեմարան |
| սթ | սք | սփ |
| սթափվել | սքանչանալ | սփոփանք |

Ը ձայնավորը բառավերջում միշտ գրվում է։

## 111. Զբոսանքին

Յերկու ընկեր յերեկոյան զբաղմունքը վերջացրին, շտապ ընթրեցին ու գնացին զբոսնելու։ Լապտերի մոտով անցնելիս Գարեգինն ասաց.

— Ստեփան, սպասիր, տես ինչ յերկար ստվերներ ունենք։

Արտագրեցեք նախորդ աշխատանքի ձևով։



## 112. Սկ, ստ, շտ, զբ, զգ, սպ, սթ, սք յերկբաղաձայններով սկսվող բառեր

սկյուռ, սկսնակ, ստացական, ստորակետ, շտապ, շտեմարան, զբոսանք, զբաղմունք, զգույշ, զգեստ, սպունգ, սպիտակ, սթափվել, սքանչելի

Արտագրեցե՛ք և յուրաքանչյուր բառի վերևը գրեցե՛ք հընչյունների թիվը։

## 113. Ստուգողական արտագրություն

1) —պանդարը —տեփանավանից նամակ —տացավ։ 2) Կովի —տամոքսը մեծ է։ 3) Աշակերտն —տուգում է իր լուծած խնդիրները։ 4) Մեր դասերն —կըսվում են ժամի ութին։ 5) —կզբում մենք չեյինք կարողանում արագ և գեղեցիկ գրել։ 6) Գրատախտակը մաքրում են —պունգով։ 7) Բամբակն —պիտակ է։ 8) Աշակերտները դասարանում —պասում են ուսուցչին։ 9) Հովիվը —պանեց գայլին։ 10) Հովհաննեսը նոր —գեստ ունի։ 11) Մենք ունենք հինգ —գայարան։ 12) Յերեխաները գնացին —բոսնելու։ 13) Դասարանում մենք —բաղվում ենք ընթերցանությամբ։ 14) Աշակերտներն —տապում են դպրոց։ 15) Ցորենը պահում են —տեմարանում։

* Սպանդար, Ստեփանավան, ստամոքս, ստուգում, սկըսվում, սպունգ, սպիտակ, սպանել, սպասել, զգեստ, զգայարան, զբոսնել, զբաղվել, շտապում, շտեմարան

9) ԻԿ, ԱԿ, ՈՒԿ, ՈՒՀԻ *մասնիկները*

## 114. իկ, ակ, ուկ *մասնիկներով բառեր*

| իկ | ակ | ուկ |
|---|---|---|
| ուլ—ուլիկ | գետ – գետակ | հորթ—հորթուկ |
| այծ — . . . . | տեր — .... | ձագ — .... |

Լրացրե՛ք և գրեցե՛ք:

> *Բառերի վերջում գրվող* իկ, ակ, ուկ *մասնիկները գրվում են* կ *տառով:*

## 115. Շաղգամը հողից հանեցին

*Կատվիկը կանչեց մկնիկին: Մկնիկը կատվիկից, կատվիկը շնիկից, շնիկը թոռնիկից, թոռնիկը տատիկից, տատիկը պապիկից, պապիկը շաղգամից, որ քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից հանեցին:*

Արտագրեցե՛ք: Ընդգծեցե՛ք իկ մասնիկ ունեցող բառերը:

## 116. Ձվիկ, թաթիկ, բեղիկ

*Հավն ածեց ձու, իսկ թիթեռնիկը՝* .... :
*Շունն ունի թաթեր, իսկ ճանճը՝* .... :
*Կատուն ունի բեղեր, իսկ թիթեռնիկը՝* .... :

Կարդացե՛ք և բաց թողած բառերն ավելացրե՛ք:

## 117. Հանելուկներ

*Յերկու ծայր, յերկու օղակ, իսկ մեջտեղը՝ բեվեռակ:*
*Սպիտակ տակառիկ, մեջը յերկու գույն խմելիք:*

Հանելուկների լուծումները՝ *մկրատ, ձու:*

Գտե՛ք այս հանելուկների լուծումները: Նկարեցե՛ք և նկարների տակ արտագրեցե՛ք:

Ընդգծեցե՛ք ակ և իկ մասնիկները:



## 118. Սիրունիկ թռչնիկ

*Ա՛յ իմ ձագուկ, ա՛յ իմ թռչնիկ, փափկամազիկ, յերկար վզիկ, յերկար վոտիկ, յերկար տոտիկ, բոյդ բարձրիկ, ձայնդ քաղցրիկ:*

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք իկ և ուկ մասնիկները:

## 119. Ստուգողական արտագրություն

*Քո թեվ փափուկ ու խատուտ—,*
*Փոքր — կտուց, կարմիր տոտ —,*
*Կարմիր կարմիր տոտ—ներով*
*Կչորորաս ճուտ—ներով*
*Սիրուն— , սիրուն— ,*
*Նախշուն կաքավ— :*

## 120. Ուհի *մասնիկով բառեր*

| | |
|---|---|
| բանվոր—բանվորուհի | դերասան— . . . . |
| աշակերտ— . . . . | դերձակ — . . . . |

Լրացրե՛ք և գրեցե՛ք: Ընդգծեցե՛ք ուհի մասնիկը:

## 121. Այբբենական անվանացուցակ

*Մաքրուհի, Իսկուհի, Սրբուհի, Արմենուհի, Զարուհի, Հայկուհի, Վարդուհի, Թագուհի*

Արտագրեցե՛ք այբբենական կարգով:

## 122. Մարտի 8-ը

*Մարտի ութը աշխատավոր—ների տոնն է: Այդ օրը պարգեվատրվում են գերազանցիկ աշակերտ—ները և ուսանող—ները, հարվածային ուսուցչ—ները, ստախանովական բանվոր—ները և կոլտնտես—ները:*

Արտագրեցե՛ք: Կետիկների տեղը ավելացրե՛ք բաց թողած ուհի մասնիկը:

## 10) Յ-ՈՎ ՅԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐ

### 123. Մեր օրագրից

Այսօր Ցեվգինե Հարությունյանի մայրը և Արշալույս Հայրապետյանի մորաքույրը յեկել եյին դպրոց մեր դասերը լսելու։

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք յ-ով յերկհնչյունները։

### 124. Յ-ով յերկհնչյունների աղյուսակ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| այ, | ոյ, | ույ, | եյ | | |
| յա, | յո, | յու, | յե, | յի, | յը |

Արտագրեցե՛ք այս աղյուսակը։

### 125. Յերեք սերունդ

Հայրս, մայրս կոմունիստ են,
Յեղբայրս՝ կոմյերիտական,
Քույրիկս ժիր պիոներ է,
Իսկ յես՝ առույգ հոկտեմբերիկ։

Արտագրեցե՛ք յ-ով յերկհնչյուն ունեցող բառերը։

### 126. Վարակիչ հիվանդություններից պաշտպանվեցե՛ք

Վարակիչ հիվանդություն ունեցող աշակերտներին չի կարելի դպրոց թողնել՝ բկացավի դեպքում՝ յոթ վեցօրյակ, ծաղկի դեպքում՝ յերեք ....։

Լրացրե՛ք և ընդգծեցե՛ք այ, յո, յե յերկհնչյունները։



## 11) Յ ՁԱՅՆԱԿԱՊԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 127. Յ ձայնակապով բառեր

մայիս, ինքնայեռ, կայարան, պայուսակ, հայոց, րոպեյի, րոպեյական, կոյուղի, կինոյի, նոյեմբեր

Կազմեցե՛ք նախադասություններ այս բառերով։

> Յերբ բառի մեջ ա, ե, ո ձայնավորներից հետո ձայնավոր է գալիս, պետք է գրել յ ձայնակապը։

### 128. Տողադարձի վարժություններ

Ամո-յին. Կամո-յին. Մարո-յով
կա-յարան. նա-յող. Ե-յակ. հա-յերի

Արտագրեցե՛ք վանկերի բաժանած և ընդգծեցե՛ք յ ձայնակապը։

> Յ ձայնակապը միշտ միանում է հաջորդ ձայնավորին և նրա հետ կազմում է վանկ։

### 129. Վարժություններ

1) Գայանեն Աննայի, Մարոյի, Ցեվգինեյի և Կարինեյի համար պայուսակներ գնեց։ 2) Նոյեմբերն ունի 30 օր, իսկ մայիսը՝ 31 օր։ 3) Յերևանում կա կոյուղի։ 4) Արամայիսը և Միքայելը յերեկոյան թեյում եյին։

Արտագրեցե՛ք՝ բառերը վանկերի բաժանելով և ընդգծեցե՛ք ձայնակապով կազմված վանկերը։

## 130. Գաբրիելը՝ պիոներ

Բենիամինն ու Մարիամը Թբիլիսիի պիոներներ են: Նրանք Գաբրիելին ընդունել տվին պիոներական ջոկատի մեջ: Նրանց ջոկատը հայտնի յե ամբողջ Խորհրդային Միության մեջ:

Արտագրեցե՛ք իա, իո, իու, իե, իի յերկձայնավորները և ընդգծեցե՛ք:

> Իա, իո, իու, իե, իի յերկձայնավորներն միջև յ ձայնակապ չի դրվում:

## 131. Այբբենական ցուցակ

Մարիամ. Ջամիլիա. Դա- նիել. Արապիոն. Բենիամին:

Արտագրեցե՛ք այբբենական կարգով:

## 132. Փոքրիկ Դանիելը

Դանիելը պապի ձեռնափայտը ձի յե շինել, ձիավոր դարձել, վազվզում և ու կանչում.

— Ճանապա՛րհ տվեք, յես սանատորիա յեմ գնում... Ի՞նչ ես ճանապարհս կտրել,—բղավում և նա մեծ յեղբոր վրա,—չե՞ս տեսնում, նոր եմ յեկել Թբիլիսիից. յես շտապում եմ, գնալու յեմ:

— Ա՛, ներողություն, ընկեր Դանիել, մի բարկանա, յես ճիշտն ասած, չեյի տեսել քո ձիուն,—ծիծաղում և պիոներ Արապիոնը ու յետ փախչում:

Ծիծաղում և Դանիելը, ձիուն խփում, առաջ վազում:

Արտագրեցե՛ք իա, իո, իու, իե, իի յերկձայնավորներով բառերը:



## 133. Ի-ով սկսվող յերկձայնավորների աղյուսակ

իա, իո իու իե, իի

Արտագրեցե՛ք այս աղյուսակը:
Ասացե՛ք բառեր իա, իո, իու, իե, իի յերկձայնավորներով:

## 134. Ստուգողական արտագրություն

Հորվածա—յին Բեն—ամինը պարգևատրվեց ռադի— բարձրախոսով:

Միլից—ոներներ Գաբրի—լը և Դան—ելը մ-ա-սին եքսկուրսի— գնացին Խորհրդա-յին Մի— թյան մայրաքաղաքը:

Մար—ամին և Ցերեմի—յին ուղարկեցին սա-նատոր-ա:

Միքա—ելն ու Իսրա—ելը գնացին կա—արան:

Հա—աստանում հո—ակապ գործարաններ կան:

## 135. Ստուգողական գրավոր աշխատանք.



Հերթով գրեցե՛ք այստեղ նկարված առարկաների անունները:

# IX. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

## 136. Կատակ

— Ի՞նչ ես անում։
— Ոչինչ։
— Իսկ նա ի՞նչ է անում։
— Ինձ է օգնում։

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք հարցական բառերը։

**Հարցական նշան (՞)**

Հարցական բառի վերջին ձայնավորի վրա հարցական նշան է դրվում։

## 137. Հարցաթերթ

Անուն.—
Ազգանուն.—
Քանի՞ տարեկան ես.—
Հոկտեմբերիկ ես, թե ոչ.
Ո՞ր դասարանում ես.—

Կարդացե՛ք հարցաթերթը։

Արտագրեցե՛ք միայն հարցերը և պատասխանների տեղը գրեցե՛ք ձեր անունը, ազգանունը, տարիքը և այլն։

## 138. Հարցեր

Գերազանցի՞կ ես։
Հոկտեմբերի՞կ ես։
Նվագել գիտե՞ս։
Գրելուց առաջ ձեռներդ լվանո՞ւմ ես։

Օրինակ՝ Նվագել գիտե՞ս։—Այո՛։

Արտագրեցե՛ք հարցերը և ամեն մի հարցին պատասխանեցե՛ք այո՛ կամ ո՛չ բառերով։

Պատասխանից առաջ գի՛ծ դրեք և սկսեցե՛ք մեծատառով։



## 139. Հարցեր և պատասխաններ

| Հարցեր | Պատասխաններ |
| --- | --- |
| 1) Արամը հիվա՞նդ է։ | 1) Արամը հիվանդ է։ |
| 2) Տաքություն ունի՞։ | 2) Տաքություն ունի։ |

Կարդացե՛ք հարցերը ձախ սյունակում և նրանց պատասխանները՝ աջ սյունակում։
Ինչպե՞ս եք կարդում հարցերը և ինչպե՞ս՝ պատասխանները։

## 140. Գարնան նշանները

| Հարցեր | Պատասխաններ |
| --- | --- |
| 1) Ձյունը հալվե՞լ է։ | 1) .... |
| 2) Դուրսը տաք է։ | 2) .... |
| 3) Թռչունները վերադարձե՞լ են։ | 3) .... |

Արտագրեցե՛ք հարցերը և ապա՝ գրեցե՛ք պատասխանները նույն բառերով։

## 141. Վարժություններ

| Հարց | Պատասխաններ |
| --- | --- |
| 1) .... | 1) Դպրոց գնում եմ։ |
| 2) .... | 2) Դասերից չեմ ուշանում։ |
| 3) .... | 3) Դասերս լավ սովորում եմ։ |

Օրինակ՝ Դպրոց գնո՞ւմ ես։

Այս պատասխանների համար գրեցե՛ք միայն հարցերը։

## 142. Կարմիր Բանակը մեր երկրի պահակն է

— Ո՞վ է պաշտպանում մեր երկիրը։
— Կարմիր Բանակը։
— Ո՞ւմ է պաշտպանում Կարմիր Բանակը։
— Աշխատավորներին։

Արտագրեցե՛ք հարցերը և գրեցե՛ք նրանց լրիվ պատասխանները։

## 143. Հովհաննես Թումանյան

1)... | 1) Հովհ. Թումանյանը ծնվել է 1869 թվին։
2)... | 2) Հովհ. Թումանյանը մեռել է 1923 թվին։

Գրեցե՛ք միայն լրիվ հարցերը։

*Օրինակ՝* Յե՞րբ է ծնվել Հովհ. Թումանյանը։

Չմոռանա՛ք նախադասության վերջում վերջակետ դնել, իսկ հարցական բառերի վրա՝ հարցական նշան։

## 144. Գարուն

*Ի՞նչ յեղանակ է գալիս ձմեռվանից հետո։ Արևը յերկա՞ր է մնում յերկնքում։ Ինչպե՞ս է լինում օդը։ Ինչպե՞ս են լինում ցերեկները։ Ի՞նչ է լինում ձյունը։ Վո՞ր թռչուններն են վերադառնում տաք յերկրներից։ Ինչո՞վ են ծածկվում դաշտերը։ Ի՞նչ են անում կոլտնտեսականները դաշտում։*

(գարուն, տաքանում է, յերկարում են, կարճանում, հալչում է, չվող թռչուններ, կանաչով, աշխատում են)

Տրված հարցերին լրիվ պատասխաններ գրեցե՛ք, վոր ստացվի փոքրիկ պատմվածք։

## 145. Գրքի պահանջները

*Մի՛ պատառոտի ինձ։*
*Մի՛ գրի թերթերիս վրա։*
*Ինձ կազմահան մի՛ անի։*
*Միշտ զբաղվի՛ր ինձնով։*

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք բառերի ուժեղ արտասանվող վանկերը։

> Շեշտ (՛)
> *Բառի ուժեղ արտասանվող վանկի ձայնավորի վրա* շեշտ *է դրվում։*



## 146. Հանելուկ

*Են ինչ բան է, իմ մանկիկ.*
*Զույգ լծափայտ ականջին,*
*Քթի վրա մի թամբիկ,*
*Յերկու անիվ աչքերին։*
*Հանելուկի լուծումը՝* ակնոցներ։

Արտագրեցե՛ք։ Չմոռանա՛ք շեշտը և հարցական նշանը դնել

## 147. Հիշի՛ր

*Դասերդ միշտ պատրաստի՛ր։*
*Լա՛վ կարդա և գեղեցի՛կ գրի՛ր։*
*Մաքո՛ւր պահի՛ր շորերդ և գրենական պիտույքներդ։*

Արտագրեցե՛ք։

## 148. Գող աղվեսը

*Մին էլ կանչեց տատս պառավ.*
*«Ամա՛ն, հասե՛ք, տարա՛վ, կերա՛վ,*
*Գլխիս ես ինչ փորձանք բերավ*
*Անտեր աղվեսը՝ պոչը ծաղիկ»։*

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք յերկար արտասանվող բառերը։

> Բացականչական նշան (՜)
> *Բառի յերկար արտասանվող վանկի* ձայնավորի վրա *բացականչական նշան է դրվում։*

## 149. Կայարանում

*Զանգակը զնգաց՝ զը՜նգ, զը՜նգ։*
*Սուլիչը սուլեց՝ ու՜ ու՜ ու՜։*
*Ծուխը բարձրացավ՝ փու՜հ, փու՜հ, փու՜հ։*
*Շոգին դուրս պրծավ՝ ֆը՜շշ, ֆը՜շշ, ֆը՜շշ։*
*Անիվները պտտվեցին՝ չը՜խկ, չը՜խկ, չը՜խկ։*

Արտագրեցե՛ք։ Չմոռանա՛ք բացականչական նշանը դնել։

## 150. Վախկոտը



*Վայ, վայ, վախենում եմ:*
*Այ, այ, ցավում է,*
*մայրիկ, մայրիկ:*

**Արտագրեցե՛ք: Երկար արտասանվող բառերի վրա բաց թողած բացականչական նշանները դրե՛ք:**

> Շեշտը (՛)
> հարցական նշանը (՞)
> բացականչական նշանը (՜)
> առոգանության նշաններ են:

## 151. Վարժություններ

1) Հովտում առուն խոխոջում է
Գլգլալեն անո՜ւշ, անո՜ւշ,
Քամին բարակ շնկշնկում է
Զլզլալեն անո՛ւշ, անո՛ւշ:

2) Ծիտը ծառին ծլվլում է՝ ծի՜վ, ծի՜վ, ծի՜վ...
Բազեն գլխին պտտվում է՝ վա՜յ, վա՜յ, վա՜յ...

3) Կենդանի... կենդանին է:
— Այո՛,—լսվեց խողովակի միջից:

**Արտագրեցե՛ք: Չմոռանա՛ք առոգանության նշանները դնել:**



> Բացի առոգանության նշաններից կան նաև կետադրության հետևյալ նշաններ՝
>
> | | |
> |---|---|
> | վերջակետ (:) | ենթամնա (՚) |
> | միջակետ (.) | չակերտ («») |
> | ստորակետ (,) | անջատման գիծ (—) |
> | բութ (՝) | կախման կետեր (...) |

## 152. Արձագանք

Փոքրիկ Արտաշեսը շվացնելով գնում էր ձորով: Հանկարծ լսեց, որ մի ուրիշն էլ է շվացնում: Հենց իմացավ՝ ընկերն է, կանգնեց և ձայն տվեց.

— Վահա՜ն, դո՞ւ ես:



— Ե՜ս...
— Մեր հորթն ո՞ւր գնաց, տեսա՞ր:
— Սա՜ր...
— Հանաք ես անում, ի՞նչ է:
— Չէ...
— Վա՜յ, էդ հո գելը կուտի:
— Ուտի...

Արտաշեսը լալով վազեց տուն, տեսավ հորթն էլ է տանը, Վահանն էլ:

**Արտագրեցե՛ք հինգերորդ տողից մինչև տասնմեկերորդ տողը և ձեր արտագրածը դերերով ճիշտ առոգանությամբ կարդացե՛ք:**

# X. ՆՐԿՆՈՒԹՅՈՒՆ

## 153. Վարժություններ

*Հակոբի վորդին դարբին ե || առանց ողի ապրել չենք կարող || ձին ընտանի կենդանի յե || ձեռքերն ու վոտքերը մարմնի անդամներ են || ձյան փաթիլներն արագ վայր են իջնում ||*

* Հակոբ, դարբին, մարդ, անդամ, արագ, իջնում, ող

Արտագրեցե՛ք և ամեն մի նախադասությունից հետո զուգահեռ գծիկների տեղը **վերջակետ դրեք**: Վերջակետից հետո **մեծատառո՛վ** սկսեցե՛ք:

## 154. Աշուն

*Աշուն ե բարակ անձրև ե մաղում ծառերը մերկանում են թռչունները յերամ-յերամ թռչում են տաք յերկրներ որերը կարճանում են յերեխաները* դպրոց *են գնում:*

* *թռչուններ*, դպրոց

Կարդացե՛ք **պատմվածքը** և բաժանեցե՛ք **նախադասությունների**:

Արտագրեցե՛ք: Յուրաքանչյուր նախադասության վերջում **վերջակե՛տ դրեք** և վերջակետից հետո **մեծատառո՛վ** սկսեցե՛ք:

## 155. Կազմել նախադասություններ

1) *հավերը, աքաղաղը, ճուտերը, բազեն*
2) *կչկչացին, ծղրտաց, ծվացին, յերևաց*

Կազմեցե՛ք նախադասություններ՝ առաջին տողի բառերը յերկրորդ տողի համապատասխան բառերի հետ գործածելով:

## 156. Բառերի կապակցություններ

*Յես* .... : *Մենք* .... :
*Դու* .... : *Դուք* .... :
*Նա* .... : *Նրանք* .... :

(կարդում ենք, կարդում են, կարդում եք, կարդում ե, կարդում ես, կարդում եմ)

Բառերն իրար հետ այնպես **կապակցեցե՛ք**, վոր **կանոնավոր նախադասություններ ստացվեն**:



## 157. Գայլը և շունը

*Գայլը և շունը .... : Գայլը .... , իսկ շունը .... : Գայլն ապրում է .... , իսկ շունը .... : Գայլը մարդուն .... , իսկ շունը .... :*
(ցեղակից են, վայրի կենդանի յե, ընտանի կենդանի յե, անտառում, բակում, վնաս ե տալիս, ոգուտ ե տալիս)

*գայլ, ոգուտ, կենդանի, վայրի

Լրացրե՛ք նախադասությունները փակագծերում տրված համապատասխան բառերով և արտագրեցե՛ք:

## 158. Անտառում

*.... յերկնքում չեր յերևվում վոչ մի ամպ: Ինչ լավ եր .... անտառում .... խոտը փայլում եր ցողի կաթիլներից : .... թռչունները յերգում եյին: .... շուշանները և .... մանուշակները ծաղկել եյին:*
(կապուտակ, ծառաշատ, կանաչավետ, նախշուն, սպիտակ, կապույտ)

Արտագրեցե՛ք և կետերի տեղը դրե՛ք **հատկություն** ցույց տվող բառեր:

## 159. Նարգիզ հորթը

*Աչքերը չալ-չալ, դունչը սպիտակ, գլուխը փոքրիկ, վոտքերը բարակ, մարմինը ալվան, պոչը շատ յերկար, ծայրը փնջավոր, այ, այսպես եր Նարգիզ հորթը:*

Արտագրեցե՛ք միայն հատկություն ցույց տվող բառերը:

## 160. Ի՞նչ ե լինում առարկան

*Ջուրը գոլորշիանում ե: Գետը .... : Վառարանը .... :*
(հոսում ե, վառվում ե)

Կարդացե՛ք. կետերի տեղը ավելացրե՛ք **համար բառեր, վորոնք ցույց տան, թե ի՞նչ ե լինում առարկան**:

## 161. Ես ինչպես եմ արտագրում

*Արտագրում եմ բառը միանգամից և ոչ տառ-տառ։ Արտագրում եմ գեղեցիկ և անսխալ։*

Արտագրեցե՛ք:

Գործողություն ցույց տվող բառերն ընդգծեցե՛ք:

## 162. Վարժություններ

*1) Պայծառ արևը փայլում է։*

*2) Ջանասեր աշակերտը լավ ձեռագիր ունի։*

*3) Գերազանցիկ աշակերտուհին պարգևատրվեց։*

* աշակերտուհի, պարգևատրություն

Արտագրեցե՛ք: Գործողություն ցույց տվող բառերի տակ մի գիծ քաշեցե՛ք, առարկայի անունների տակ՝ երկու գիծ, իսկ որակություն ցույց տվող բառերի տակ՝ ալիքաձև գիծ:

## 163. Մաքսիմ Գորկի

*Ամբողջ աշխարհի աշխատավորների սիրելի գրող և մեծ հեղափոխական Մաքսիմ Գորկին ծնվել է 1868 թվին Վոլգա գետի ափին գտնվող Նիժնի-Նովգորոդ քաղաքում, որը 1932 թվից մեծ գրողի պատվին կոչվում է Գորկի։*

*Գորկին սպանվել է ժողովրդի թշնամիների կողմից 1936 թվին։ Գորկու անունով փողոցներ, գործարաններ, դպրոցներ կան Լենինգրադում, Ուլյանովսկում, Ստալինգրադում, Կիրովաբադում, Թբիլիսիում, Երևանում և այլ քաղաքներում։ Գորկու գրվածքները թարգմանված են վրացերեն, ադրբեջաներեն, հայերեն, ուկրաիներեն, բելոռուսերեն, կիրգիզերեն, տաճիկերեն, ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն և այլ լեզուներով։*

Արտագրեցե՛ք: Ընդգծեցե՛ք բոլոր մեծատառերը և ամեն դեպքում բացատրեցե՛ք ինչո՞ւ են այդտեղ մեծատառ գրվում:



## 164. Նման անուններ

*Վարդ, վարդ. Համլիկ, համլիկ. Մանուշակ, մանուշակ. Շուշան, շուշան. Մարգարիտ, մարգարիտ. Մեխակ, մեխակ. Ազնիվ, ազնիվ. Արշալույս, արշալույս*

*վարդ, մարգարիտ

Արտագրեցե՛ք մարդկանց անունները այբբենական կարգով:

## 165. Հոգնակի բառեր

*Երեխաները տաք շորեր հագան, վերցրին իրենց սահնակները, սղղանները, դահուկները և դուրս եկան փողոց։*

* սղղաններ, սողուններ, սեղաններ, ճաշարաններ

Արտագրեցե՛ք հոգնակի բառերը և ընդգծեցե՛ք հոգնակի եր և ներ մասնիկները:

## 166. Եզակի բառեր

*Արագիլն ուտում է գորտ, միջատ, որդ, մողես և նույնիսկ թունավոր օձ։*

*միջատ, որդ, օձ

Արտագրեցե՛ք և եզակի բառերը հոգնակի դարձրե՛ք: Ընդգծեցե՛ք բաղաձայնները:

## 167. Տարվա ո՞ր եղանակն եմ

*Ես ոսկեզօծում եմ արտերը և կռացնում հասկերի գլուխները։ Ես կախ եմ անում այգիներում տանձ, խնձոր և խաղող։*

*Ես ճուտիկներին թռցնում եմ բներից և թռչուններին հանում զով անտառ, ազատ սարերը։*

*արտ, արտեր. անտառ, անտառներ. թռչուն, թռչուններ

Արտագրեցե՛ք: Միավանկ բառերի տակ մեկ գի՛ծ քաշեցե՛ք, իսկ բազմավանկ բառերի տակ՝ երկու գիծ:

## 168. Վարդ, Վարդան, Վարդանուշ, Վարդուհի

*Ութ տառանի մի բառ եմ.*
*Մեկ վանկով ծաղիկ եմ.*
*Յերկու վանկով տղայի անուն եմ.*
*Յերեք վանկով աղջկա անուն եմ.*

Արտագրեցե՛ք: Գծեցե՛ք դ տառը, վոր արտասանվում ե թ:

## 169. Ոդաչու պիտի դառնամ

*Յես մոդելիստ եմ. մեր մոդելները շատ բարձր են թռչում:*

*Վորոշել եմ, յերբ մեծանամ, անպայման ոդաչու դառնալ, վորպեսզի յես ել մասնակցեմ մեր սքանչելի հայրենիքի պաշտպանության գործին:*

**ոդաչու*

Արտագրեցե՛ք: Ընդգծեցե՛ք դ տառը, վոր արտասանվում ե թ:

## 170. Հանելուկ

*Չորս վոտք ունեմ կարճ ու կոկ —,*
*Գլուխ ունեմ ինչպես գորտ —,*
*Մարդ տեսնելիս սիրտս ե դողում,*
*Վոտք, գլուխս չի յերեվում:*

Հանելուկի լուծումը՝ կրիա:

Հանելուկի լուծումը գրեցե՛ք վորպես վերնագիր:
Արտագրեցե՛ք: Գծիկների տեղը դրե՛ք բաց թողած իկ մասնիկը:

## 171. Շարադ

*Առաջին վանկս կերակրի մեջ եք գործածում, յերկրորդը՝ փոքրիկ կրծող կենդանի յե, իսկ ամբողջ բառը տհաճ ձայն ե:*

**ամբողջ*

*Շարադի լուծումը՝* աղ—մուկ

Արտագրեցե՛ք: Շարադի լուծումը գրեցե՛ք վորպես վերնագիր:
Ընդգծեցե՛ք ղ տառը, վոր կարդացվում ե խ:



## 172. Ստուգողական արտագրություն

*Ա՜յ դու, անպիտան կեն—անի, ինչ իրավունքով և վո՞ր որենքով համար—ակվել ես իմ մաքուր ջուրը քո կե—տոտ բերանով այդպես պղտորել ավազով, ցեխով և հազար տեսակ աղ—ով:*

*համարձակ, վոտիկ, ճուտիկ, յեղբայրիկ, փոքրիկ, կենդանի, աղբ, կեղտոտ

*Յեթե դժվարանում եք ճիշտ գրել այդ բառերը, վորոնեցեք դասագրքի* ուղղագրական բառացուցակում:

## 173. Հանելուկներ



*1) Մի մարա— մեջը լիքն ուրա—:*

*2) Սպիտակ մեծ սփռոցն աշխար—ն առավ իրա տակ:*

*2) Հազար գլուխ վոչխար կտանի, մի խուր— խոտ չի տանի:*

*4) Նոր աման ե, բայց ամբող—ը ծակերով ե:*

*5) Վո՞ր թռչուններն են ջուրը մտնում և առանց թր—վելու դուրս գալիս:*

*մարագ, ուրագ, աշխարհ, հագնել, ամբողջ, խուրձ

Այստեղ նկարներում տրված են հանելուկների լուծումները:
Կարդացե՛ք հանելուկները նկարների կարգով:
Արտագրեցե՛ք և գծիկների տեղը դրե՛ք բաց թողած տառերը:
Ընդգծեցե՛ք րջ, րձ, րհ, ղջ յերկբաղաձայններ ունեցող բառերը:

## 174. Հերոսուհու աղջիկը

Իսպանիայի բոցաշունչ հեղափոխական Դոլորես Իբարրուրիի աղջիկ Ամայան ապրում և սովորում է Մոսկվայում — ՄՈՊՐ-ի ինտերնացիոնալ յերկրորդ մանկատանը։

Ամայան Իսպանիայից դուրս է յեկել այն ժամանակ, յերբ գերմանական և իտալական ֆաշիստներն ոդային ուժերով փորձում եյին Մադրիդը մոխիր դարձնել։

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք այն տառերը, որոնց արտասանությունը չի համապատասխանում իրենց հնչյուններին։

## 175. Ընկեր Դիմիտրովի նամակից

Ողջույն «Շիրկանալ»-ի կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին։

Իմ բաժին աշխարհը խնդրում եմ հանձնեք ՄՈՊՐ-ի ֆոնդին՝ ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարող մարտիկների ոգնության ուժեղացման և ընկեր Թելմա[illegible] ազատագրման պայքարի համար։

Ամբողջ սրտով ցանկանում եմ ձեզ առողջություն, հաջողություններ և նոր հաղթանակներ։

Դ.

Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք այն [illegible]երը, որոնց գրությունը չի համապատասխանում արտասանությանը։



# ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՑՈՒՑԱԿ

Ուղղագրական բառացուցակը գործ են ածում դըժվար գրվող բառերը սխալ չգրելու համար։

Բառացուցակները կազմվում են այբբենական կարգով։

| | | |
|---|---|---|
| աղբ | բուրդ | Թադևոս |
| աղբյուր | | թակարդ |
| աղջիկ | Գաբրիել | թելադրություն |
| ամբողջ | գառնուկ | թուղթ |
| այբուբեն | գեղջկուհի | թվաբանություն |
| անգամ | Գևորգ | |
| անդամ | գոգնոց | ժողովուրդ |
| աշակերտուհի | Գրիգոր | իբրև |
| աշխարհ | գրչատուփ | լուսանցք |
| | դադար | խեղդել |
| առաջին | դասամիջոց | խնդիր |
| առողջ | դարբին | խոնարհ |
| ավագ | դարձյալ | խորհուրդ |
| արդեն | դդում | |
| արհամարհել | դեղձ | ծագել |
| արջ | դե[illegible]ակուհի | ծծան |
| արտագրություն | դպրոց | |
| բադիկ | | |
| բաղաձայն | զարդարվել | կարագ |
| բարձր | զուգվել | կարգապահ |
| բարձրախոս | | կարգապահություն |
| բացականչական | ընդունակ | կարդալ |
| բնագիտություն | ընդունել | կենդանի |



391. Հայոց լեզու II դաս.—3

ճագնել
Հակոբ
հաղթել
համարձակ
հայոց լեզու
հանդերձարան
հոգնակի
հոգնել
հոկտեմբերին
ձագ
ղեկավար
ճանապարհ
մայիս
Մարգարիտ
մարդ
միջակ
միրգ
միջանցք
յեզակի
յեղբայր
յերբեք
յերեսուբիչ

յերգ
յերկրորդ
յերրորդ
նախադասություն
նկարչություն
նոյեմբեր
նորոգել
շարադրություն
շեշտ
շշուկ
շոգ
ոգնել
ոգնություն
ոգոստոս
ոգտակար
ող
ողանավ
ոձ
ուղիղ
ուղղագրություն
ուղտ
ուսուցիչ
ուսուցչուհի
չարաճճի

չղջիկ
պայուսակ
ջարդել
ռետին
Սարգիս
սեպտեմբեր
Վարդան
վերջակետ
վողջույն
վորդի
վորսորդ
տախտակ
տարրական
րոպե
ցուցահանդես
փորձ
քաղցր
քառորդ
Ֆիզկուլտուրա



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | էջ |
|---|---|---|
| I. | Նախադասություն | 3 |
| II. | Առարկա և նրա թիվը | 9 |
| III. | Առարկայի փոփոխությունը | 15 |
| IV. | Առարկայի գործողությունը | 18 |
| V. | Մեծատառ անունների սկզբում | 19 |
| VI. | Վանկ և բառերի տողադարձ | 23 |
| VII. | Հնչյուններ և տառեր | 26 |
| VIII. | Ուղղագրական վարժություններ | 32 |
| IX. | Առոգանության նշանների գործածությունը | 50 |
| X. | Կրկնություն | 56 |
| | Ուղղագրական բառացուցակ | 63 |

ՀՀ Ազգային գրադարան
NL0232877

6096

Գին 1 ռ.

М. ГАСПАРЯН
**Армянский язык**
Грамматика правописание для начальных школ
Гиз Арм. ССР, Ереван 1938 г.